ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» հուլիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-68/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Անանո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Անանո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 11.05.2016թ. թիվ «ԵՔ–ՇՀԱՊՁԲ–16/104» ծածկագրով հաստատված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի հանձնաժողովի թիվ «2» որոշմամբ Ընկերությանն է ուղարկվել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավեր:

20.05.2016թ. թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Անանո» ՍՊԸ-ի հայտը՝ անընդունելի լինելու պատճառաբանությամբ:

«Անանո» ՍՊԸ-ն, որպես բողոքի իրավական հիմք նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝Օրենք) 27-րդ հոդվածի համաձայն՝

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) հայտի ապահովումը.

4) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ), եթե հրավերով նախատեսված է.

5) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Նույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) բաց ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

6. Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Սահմանափակ ընթացակարգի հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

4. Եթե գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն հոդվածի 3-րդ մասում նշված արձանագրությանը:

5. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում: Պատվիրատուն պարտավոր է ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար, բացառությամբ սույն օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների:

6. Հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրան բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա հայտնում է ինքնաբացարկ՝ բացառելով իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին, իսկ տվյալ ընթացակարգում նրան փոխարինում է հանձնաժողովի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

7. Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

ՀՀ կառավարության 5 դեկտեմբերի 2013 թվականի N 1370-Ն էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգով սահմանվում են Հայաստանի

Հանրապետությունում էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հիմնական հարաբերությունները: Նույն կարգի նպատակն էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ու ապահովումն է, որը պարունակում է էլեկտրոնային սարքավորումներ, գործիքներ և ծրագրեր, որոնք հեռակարգավորման, հեռահաղորդագրման և էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակման հնարավորություն են տալիս:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը որևիցե հիմք չուներ մերժելու Ընկերության հայտը: Ավելին՝ հայտը անընդունելի լինելու պատճառաբանությամբ մերժելու հիմք նախատեսված չէ թե գնումների մասին ՀՀ օրենքում, թե ՀՀ կառավարության 5 դեկտեմբերի 2013 թվականի N 1370-Ն էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգով, և թե ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ նաև՝ Կարգ):

Ընկերությունը նշել է նաև, որ եթե նույնիսկ հայտը մերժելու հիմք է ծառայել ֆայլի անվավերությունը, ապա դա նույնպես չի հիմավորվում ոչ մի նորմատիվ իրավական ակտով:

Այսինքն, ըստ «Անանո» ՍՊԸ-ի, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարզապես զրկել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու իրավունքից՝ առանց հիմավորման ու իրավական պատճառաբանության:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տեխնիկական խնդիրն ուղղակիորեն ազդում է իրավաբանական անձի իրավունքների ու պարտականությունների վրա՝ սահմանափակելով ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով անձի իրավունքների իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Անանո» ՍՊԸ-ն խնդրել է.

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը:

2. Կասեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 որոշման իրականացումը:

3. Դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.05.2016թ. տեղի ունեցած նիստով կայացված որոշումը՝ «Անանո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

«Անանո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 22.06.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-68/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է բողոքը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը 28.06.2016թ. թիվ 02/61-38031 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 20.05.2016թ. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի ժամանակ www.armeps.am համակարգը մերժել է «Անանո» ՍՊԸ-ի հայտը, որը պարզապես արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից:

3. <u>ԳԲԽ-68/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-68/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով մինչև 20.05.2016թ. ժամը 10:00-ին:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ «Անանո» ՍՊԸ-ի հայտը հայտնվել է չբացված հայտերի ցուցակում, որից հետո համակարգի կողմից հետագա գնահատման համար համարվել է անընդունելի:

4. Կենտրոնը 23.06.2016թ. դիմել է Armeps համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին և խնդրել է տալ պարզաբանում այն մասին, թե «Անանո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի բացման անհնարինությունը պայմանավորված է եղել Ընկերության, թե Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի գործողություններով, որին ի պատասխան «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ն 23.06.20016թ. հայտնել է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Անանո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը պարունակող ֆայլը անվավեր է (ZIP ֆայլը չի պարունակում tendermetadata.xml ֆայլը, որը անհրաժեշտ է հայտը ապակոդացորելու համար) և պատճառը հնարավոր չէ պարզել, քանի որ տվյալ գործառույթը տեղի է ունենում Ընկերության համակարգչում:

5. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 27.06.2016թ. դիմել Armeps համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 20.05.2016թ. ժամը 01:00-ից

մինչև 02:00-ն ընկած ժամանակահատվածում www.armeps.am համակարգն ունեցել է արդյոք այնպիսի ծրագրային կամ տեխնիկական խնդիր, որը կարող էր Երևանի քաղաքապետարանի կողմից 20.05.2016թ. արձանագրված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով ընթացակարգին «Անանո» ՍՊԸ-ի հայտը համակարգի կողմից հետագա գնահատման համար անընդունելի համարվելու պատճառ հանդիսանալ:

6. Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրության՝ «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ն 30.06.2016թ. գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով Armeps համակարգի log-երը, հավաստիացրել է, որ 20.05.2016թ. ժամը 01:00-ից մինչև 02:00-ն ընկած ժամանակահատվածում www.armeps.am համակարգը հասանելի է եղել և չի ունեցել տեխնիկական խնդիր:

4. ԳԲԽ-68/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 28.06.2016թ. թիվ 02/61-38031 գրությունը, «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի 23.06.2016թ. և 30.06.2016թ. պատասխանը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է՝ ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/104» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: Ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով մինչև 20.05.2016թ. ժամը 10:00-ին:

Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ «Անանո» ՍՊԸ-ի հայտը հայտնվել է չբացված հայտերի ցուցակում, որից հետո համակարգի կողմից հետագա գնահատման համար համարվել է անընդունելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն հանդիսացող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի 30.06.2016թ. պատասխանի համաձայն՝ Ընկերության կողմից 20.05.2016թ. Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված *հայտը www.armeps.am համակարգի* կողմից հետագա գնահատման համար անընդունելի համարվելը ***պայմանավորված չի եղել ծրագրային խնդրի առկայությամբ***, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Անանո» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (տվյալ դեպքում հայտ ներկայացնելու իրավունքը) սահմանափակված չի եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված չի եղել գնման գործընթացին մասնակցելու իրավունքից, ուստի և առկա չէ Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների խախտումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության 16.06.2016թ. բողոքն անհիմն է, ուստի առաջարկում ենք «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-68/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան